



Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊՈՒ. ԶԻՆՉԻՆՅԱՆ

ՔԱՐՈՉ

«Յանուան Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ, ամէն»:

«Ուխտոս դիք և կատարեցեք Տեառն Աստուծոյ մերոյ ամենեքեան, որ շուրջ էք զնուլաւ» (Սղմ. ՀԵ 12):

«Ուխտ դրեք և կատարեցեք դուք ամենըդոյ, որ կգտնիք Աստուծոյ տան մեջ»:

Միրեկի հավատացյալներ, այսօր երկու հիշատակներ կտոնախմբենք: Անոնցմեն մին Վարագա Սուրբ Խաչի հիշատակն է, իսկ մյուսը Ամենայն Հայոց Վեհափառ կայուղիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վագգեն Ա. Հայրապետի ԲԱթոռ Ս. Գրիգոր Լուսավորչի գահակալության երեսուներկուերորդ տարեդարձն է: Այս երկու հիշատակները ներքին սերտ կապ մը ունին իրարու հետ:

Հիսուսին կյանքին հետ կապված գլխավոր դեպքերը թիվով նինա, ժողովրդական բացատրությամբ, տաղավար կեռչվին. Ս. Ծնունդը, Հարությունը, Ալլակերպությունը, Ս. Աստվածածնի և Ս. Խաչի տոները: Տարվա ընթացքին Ս. Աստվածածնի յոթը տոներ կիանդիսադրենք, բայց Ս. Խաչի չորս տոներ միայն, Վերացման Ս. Խաչի, Երևման Ս. Խաչի, Գյուտ Խաչի և Վարագա Ս.

Խաչի տոները: Ամենան կարևորը Վերացման Ս. Խաչի տոնն է, և առաջին երեքը ամբողջ քրիստոնեական Եկեղեցին մեջ հայուսավորապես կտոնախմբվին: Միայն վերջինը Վարագա Ս. Խաչի տոնը մեզի՝ Բայերուս Կվերաբերի: Սեպտեմբերը արդեն, կարծեք, Ս. Խաչի փառարանության ժամանակաշրջանն է, որովհետև Վերացման Խաչի հիշատակը սեպտեմբերի տասնիննգին ամեննեն մերձավոր կիրակին կտոնվի: Խաչը մեր կյանքին մեջ շատ մտերիմ երևույթ մըն է: Քրիստոնյաները ամենուրեք Մայր տաճարներու, Եկեղեցիներու, մատուռներու գմբեթներուն, խորաններուն վրա կզետենեն զայն, անոր հովանին Աերքն կհանգչին այս աշխարհն հավատենության անցած մեր սիրելիներուն շիրմները, ամեն օր բազմաթիվ անգամներ կիաշակնքեն, վիզեն կկախեն, կամ սնարին վրա կհաստատեն: Ծիշտ է, որ հին ատեն, պատժի միջոց էր: Բայց Հիսուսի պարագային չի մատուցվիր որպես արդարության հաստուցում հանցանքի մը համար կամ մեղքերու համար, որոնք բնակ գործած չեն, այլ Հոր Աստուծոն հետ իբրև հաշտություն, որովհետև խաչը քավիչ է և փրկարար:

Սիրելի հավատացյալներ, կարատահի մեր կյանքին մեջ, որ տեսմենք, թե ինչպես հայր մը իր անառակացյալ որդիվոյն պարտքերը վճարել կուզե անառավությունը վերացնելու համար, կամ իր որդիվոյն սխալին, հանցանքին, մեղքին համար կուզե անոր տեղ բանուարկվիլ: Աղբան նաև մարդկության մեղքերուն, հանցանքներուն համար Հիսուս մեղքերը իր՝ վրա առավ և տարավ Գողգոթային վրա՝ մեղքը վերացնելու այս աշխարհին: Բայց այնքան ատեն, որ մենք կիսարտենք մեր սխալներուն, վրիպումներուն, թերություններուն, մոլություններուն, մեղքերուն մեջ՝ չենք կրնար առել մեր խաչը և երթալ Քրիստոսի ետևն: Քրիստոնյաներու նշանաբանն է խաչը: Մահվան ընթառաց գացող նահատակներուն ըստ կուտա: «Մեր քարոզեցուք զիսչելեալմ՝ Քրիստոս, իրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն»: Աղոր համար առաքյալին ըստ կուտա: «Քա լիցի ինձ պարծիլ, բայց միայն ի խաչ Տեառն Յիսուսի Քրիստոսի»: Եվ ստուգապես ամենքս ալ գիտենք, ներքնապես կզգանք, մանականդ դժվարություններու ժամանակ, թե ներքին ձայն մը մեզի կըսե՝ «սովոր յադթեսե», խաչով կիալիս: Սոլիթով մը Քրիստոսի առաքյալները, հարցուցին իրեն: «Զի՞նչ նշան իցէ բոյոյ գալատեան և վախճանի աշխարհի», «Է՞նչ հրաշք պիտի պատահի, երբ երկրորդ անգամ աշխարհ պիտի գաս, ով Տեր»: Հիսուս պատախանեց: «Յայնամ երեսն անունը նշան Որդոյ մարդոյ յերկինս և գայցե զարութեամբ և փառք բազմօր», «Այն ատեն խաչին նշանը երկուքին երեսին վրա զորությամբ և բազում փառք պիտի երևի»: Այդ քառաթիվին վրա բազկատարած խաչվեցավ Քրիստոս վասն մեղաց և ամենեցուն: Թեև խաչելությամբ ընդ անօրենս համարեցավ, բայց կատարելություն օրինաց ինք Քրիստոս է: Հին Կոտակարանին մեջ կկարդանք, թե Ադամով մեղքը այս աշխարհ մտավ: Անշուշտ մեղքին հետևանքը մաս է: Երկրորդ Ադամ՝ Քրիստոս պետք է, որ աշխարհ գար, որպեսզի մահը վերացներ, շնչեր այս աշխարհին իր խաչին միջոցավ: Մեր նախածողը դրախտին մեջ արգիլված ծառին փայտին պտուղեն կերան և պատժեցան, հետո սակայն ծարի փայտին վրա իբրև համեղաճաշակ պտուղ խաչված Հիսուսի Քրիստոսի մարմինը և արյունը ճաշակելով մեր մեղքերն կփրկվինք: Հին ատեն Խորայելացիները փարավոնյան գերութենեն ազատելու համար երբ անապատեն կանցնեին, օձերեն խայթվելով, առաջ Սովորս մարգարեն աստվածատես իր

փայտով, գավազանով օձերեն խայթված ենքուն բժշկություն կուտար: Մենք խաչալ Փրկչին խաչին այկով մեղքերեն խայթվածնեին կփրկվինք: Հին Կոտակարանի մեջ կկարդանք. «Են եմ Տեր Աստուած, որ համար քեզ յերկրեն եզիստացուց ի գերութենեն:» Իսկ մենք Հիսուս Քրիստոսով, մեղքերու գերութենեն ազատած ենք: Բայց երբեք սուրբ խաչը անթացուց մը չէ, որուն վրա կոթմնինք, այլ այս աշխարհեն հավիտենության անցնելու համար հիմանալի կամորջ մը: Եթե խաչը հաղոյանակ է, ամեն հաղոյանակ դժվարությամբ և տառապանքով կըլլա: Հարության համար Գողգոթայեա պետք էր անցնի: Եվ ո՞վ այս աշխարհի վրա, սիրելի եռբայրներ և քույրեր, կրնա ամենեն ավելի հասկնալ տառապանքը, Գողգոթան, եթե ոչ հայ մարդը անհատապես և հայ ժողովուրդը հավաքաբար: Եվ արդյոք աղոր համար չէ, որ Հայոց երկրորդ ամրողջ խաչքարերու սուրբ աշխարհ մըն է, արդյոք աղոր համար չէ, որ մեր երկրին ամեն կողմէրը կառուցած են վանքեր, եկեղեցիներ, տաճարներ, մատուռներ՝ հանուն սուրբ խաչի: Բայց խաչելութենեն ետք Հարություն կա, ինչպես լույսը մուտեն ետքը: Եվ ահավախիկ գոհություն և փառք Աստուծոն, հազար փառք, որ հարություն առած է նաև մեր ժողովուրդը: Վերածաղկալ և հառաջիմության մեջ է հայոց աշխարհը: Եվ այդ հառաջիմության մեջ հոգևոր հմատով, իր կարևոր ներդրումը ունի Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը, ազգընտիր և սիրեցյալ Հայրապետը մեր, եկեղեցական, հոգևոր, կրթական, շինարարական, խաղաղասիրական հրատարակական գործունեությամբ: Իրոք, հարություն առած է մեր ժողովուրդը, և արդիական կյանքի բոլոր բնագավառներու մեջ հսկայական կերպով կիառազդիմեն: Ես եկած եմ փարավոններու երկրեն, բոլոգերու երկրեն, Նեղոսի ափեն և հետո բերած եմ մեր ժողովուրդին, այսինքն Աֆրիկյան ցամաքամասին վրա սփոված հայորդիներուն որդիական և հավատարմական զգացումները առ ոտու նորին Վեհափառության: Եվ այսօր, հավաքած այստեղ, ամենքս, ժողովուրդ հայոց, ուխտ կրնենք և կկատարենք հավատարիմ մնալու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին: «Ուխտ դիք և կատարեցէր Տեառն Աստուծոյ մերոյ ամենեքեան, որ շուրջ էք զնովաւ:» Ինչ ցնություն և որախություն մեզ բոլորին, երբ, ականատես կըլլանք հայ ժողովուրդի վերածունդին և զարթոնքին: Ավելին, վերջին այս շուրջ յորթանասուն տարիներուն Հայոց երկրի մեջ պատերազմ

տեղի ունեցած չէ: Հայոց պատմության համարյա քոլոր շրջաններուն հակատամարտեր տեղի ունեցած են մեր հոդի վրա: Միայն այս վերջին շրջանին է, որ պատերազմ տեղի ունեցած չէ այստեղ և հայ ժողովորդը ապրու է խաղաղության մեջ: Այսպիսին են նոր ժամանակները և այսպիսին է Ամենայն Հայոց կաթողիկոսի բերած հոգևոր ներդրումը այս ժամանակներու մեջ: Այսօր, կանգնած Միածնի Խօնան այս տաճարի մեջ, միշենորդությամբ սուրբ և անմաս պատարագի և բարեխոսությամբ սուրբ կույս Աստվածածնի և անքարրառ բարեխոս սուրբ Խաչի և վերին սուրբ զորաց, խնձկանվեր մեր մաղթանքները և աղոթանվեր մեր մրմունջները կրարձրացնենք առ Աստված և կրսնեք. «Տեր Աստված նարցն մերոց, անշարժ և հաստատուն պահե առաքելական Մայր Աթոռ Ո. Էջմիած-

նինը և մեր հավատող հայր Ս. Գրիգոր Լուսավորչի գահին բազմած Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Նորին Սուլը Օծություն Տ. Տ. Կազգեն Ս. Հայուայետին շնորհին երկար կյանք և արևատություն, տուր Տեր Աստված, որ անոր իշխանությունը տարածված ըլլա ընտ ամենայն տեղին՝ ի շինություն և ի մսիթարություն հոգվոց հանուր հայոց: Կաղացներ Քեզ, Տեր Աստված, մեր հայրենիքին, ինչպես նաև ամբողջ աշխարհին, խաղաղություն պարզեն: Բայց նաև Խորհրդային Հայաստանի մեր հանրապետության սահմանները անվտանգությամբ պաշտպանե և ամենազոր և Խաչիոնցով պահպանե, որպեսզի վերածաղկումը, վերընթաց հառաջդիմությունը առանց ընդհատումի շարունակվի հավիտյան հավիտենից, ամեն:

